

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵՎ)

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վարձատուն պարտավորվում է՝ ժամանակավոր օգտագործման համար Վարձակալին ներկայացնել սույն պայմանագրի 1.2. կետում նշված գույքը, իսկ Վարձակալը պարտավորվում է դրա դիմաց վճարել վարձավճար՝ սույն պայմանագրի 3. կետով նշված չափով և ժամկետում:

1.2. Վարձատուն պարտավորվում է ժամանակավոր օգտագործման համար Վարձակալին հանձնել հետևյալ գույքը _____, այսուհետ՝ «Գույք»:

նշել վարձակալվող գույքի անվանումը

1.3. Սույն պայմանագրի 1.2. կետով նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին:

1.4. Գույքը պետք է հանձնվի Վարձակալին՝ սույն պայմանագրի ստորագրման պահից հաշված _____ օր-վա ընթացքում:

1.5. Վարձատուն պարտավոր է Վարձակալին տրամադրել Գույքը ներքոնշյալ պայմաններին համապատասխան վիճակում:

նշել պայմանները

1.6. Գույքը նախատեսված է օգտագործել _____

նպատակով:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Վարձատուն պարտավոր է՝

2.1.1. Վարձակալին նշված ժամանակին հանձնել վարձակալված Գույքը՝ սույն պայմանագրի 1. կետում նշված պայմաններին համապատասխան:

2.1.2. Իրականացնել Գույքի կապիտալ վերանորոգում:

2.2. Վարձակալը պարտավոր է՝

2.2.1. Գույքն օգտագործել սույն պայմանագրի 1.5. և 1.6. կետերի պայմաններին համապատասխան:

2.2.2. պահել Գույքը անվթար վիճակում, իր հաշվին իրականացնել ընթացիկ վերանորոգումները և կատարել ծախսեր՝ այն պահպանելու ուղղությամբ:

2.2.3. Սույն պայմանագրի 3. կետի պայմաններին համապատասխան կատարել վարձավճարի հաշվարկ՝ պայմանագրով սահմանված ժամկետում:

2.2.4. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Վարձատուին վերադարձնել Գույքը _____

վիճակում:

նշել գույքի վիճակը

3. Վարձավճարը

3.1. Վարձավճարի չափը կազմում է _____ դրամ:

3.2. Վարձակալի կողմից վարձավճարը մուծվում է ամեն ամիս (եռամսյակ), ոչ ուշ, քան վճարվելիք հաջորդ ամսվա _____ գումարն ուղարկելով Վարձատուի հաշվարկային հաշվին, որը նշված է սույն պայմանագրում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վարձակալը վճարումների ժամկետանցի համար Վարձատուին վճարում է տուգանք՝ ամսական վարձավճարի գումարի _____ տոկոսի չափով, և ժամկետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ամսական վարձավճարի _____ տոկոսի չափով:

4.2. Տուժավճարումը Կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

4.3. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժը

5.1. Սույն պայմանագրով անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ, պայթյուն, հրդեհ, երկրաշարժ,

այլ տարերային աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ, զինված հարձակում, զանգվածային անկարգություններ, մայրուղային խողովակաշարերի վթար կամ նման այլ արտակարգ դեպքեր:

5.2. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվություններից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհատափառաբերի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխագուշակել, և որի պատճառով Վարձակալը չի կարող շարունակել Գույքի բնականոն օգտագործումը:

5.3. Անհատափառաբերի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավելի երկարաձգվելու կամ դրա հետևանքները վեց ամսվա ընթացքում չվերացնելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:

6. Պայմանագրի ժամկետները

6.1. Սույն պայմանագիրը գործում է « ____ » _____ թ.-ից մինչև « ____ » _____ թ.-ը:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժան մասն են:

8.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու

ստորագրություն

Վարձակալ

ստորագրություն